

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2021ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ես՝ Անժելիկա Արթուրի Հակոբյանս, 2021 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

- Իրականացրել եմ «Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության» կողմից Հայաստանում մոնիթորինգի վերաբերյալ 5-րդ փուլի պիլոտային զեկուլյցի ուսումնասիրությունն, ոլորտային խնդիրների վերհանում և լրամշակման աշխատանքներ.
- Իրականացրել եմ Միացյալ Ազգերի կազմակերպության՝ «Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի» հոդվածներին Իսլանդիայի համապատասխանության գնահատում ակտիվների վերականգմանն ուղղված կարգավորումներին առնչությամբ.
- Մասնակցել եմ ԵՄ բյուջե տային աջակցության ինքնագնահատման տարեկան զեկուլյցի պատրաստմանը.
- Ուսումնասիրել և կարծիք եմ ներկայացրել «Երեխայի իրավունքների պաշտպանության 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումներին ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ.

- Պատրաստել եմ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքից բխող՝ խոշտանգման հանցագործությունների քննության իրավասությունը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը փոխանցելու վերաբերյալ փաստաթուղթ։
- Կատարել եմ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» և «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքներից բխող N 661-Ա ենթաօրենսդրական ակտի կիրարկման ապահովման համար անհրաժեշտ իրավական ուսումնասիրություններ։
- Իրականացրել եմ հակակոռուպցիոն ոլորտի օրենսդրական ակտերի շրջանակում մի շարք ուսումնասիրություններ և այլ աշխատանքներ։

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն փորձագետ

Անժելիկա Հակոբյան

1 հոկտեմբերի 2021թ.